

Փետրուար 27, 1980

Ազնուափայլ
Տիկին Երջանիկ Զօթեան
Միւ Եորթ.

Սիրելի Տիկին Զօթեան,

Ընորհակալութեամբ ստացած ենք ի յիշատակ ձեր հանգուց-
եալ մեծ հօր Տ. Հմայեակ Էհնյ. Տէր Բարսեղեանի, մեծ մօր
երէցկին Սրբուհի Տէր Բարսեղեանի, ծնողաց Աբրահամ եւ
Հայկունի Աբրահամեաններու հոգիներուն համար Ս. Վարդան
Մայր Տաճարին նուիրած 20.00 --քսան-- տուարի նուէրը,
ինչպէս նաեւ ձեր հանգուցեալ մօր օժիտէն մնացած երկու
կտոր զեղեցիկ ձեռագործ ``գրոշէ`` աշխատանքները, զորս
նուիրած էք Ս. Վարդան Մայր Տաճարի թանգարանին:

Աստուած լուսաւորէ ձեր հանգուցեալ պարագաներուն յի-
շատակը եւ ձեզի պարգեւէ առողջ ու երկար օրեր:

Աղօթարար

Խաժակ Վրդ. Պարսամեան
Լուսարարագետ

Համեցէք ներփակ գտնել Առաջնորդարանի թիւ 85119 ստա-
ցականը: